

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բ. ԻՐԱՅԻՆԻԳ



ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ԻՆԹՈՂԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

«ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԳՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ»

Պ Լ Ս Կ Ա Տ Ի

Госиздательство
Сельхозгиз



ԽՍՀ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ, ՀՐԱՏԱՐԱԿ, ՄՈՍԿՎԱ, 1929

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY



338.1 (47)

Բ. ԻՐԱՅԲԵՐԳ




ՄԵԾ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ԻՆԹՈՂԻԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

«ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ»

ՊԼԱՆԿԱՏԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՀԱՐԱՐ

A 4082



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԵՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՐՈՍԿՎԱ

1929

Главлит А—41098. Заказ № 1882. Тираж 2000 экз.
Кн. ф-ка ЦИЗ'а Народов СССР. Москва, Шлюзовый пр., 6.

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Խ. Ս. Հ. Միության ժողովուրդների կենտրոնական Հրատարակչության 25 լեզվով հրատարակած յերկու պլակատը՝ 1) արդյունաբերության զարգացման հնգամյա պլանի և 2) գյուղատնտեսության զարգացման ուղիների մասին՝ նկարագրական ձևով տալիս են հընգամյակի հիմնական ցուցանիշները:

Սա մի մեթոդական ձեռնարկ է՝ յերկրորդ պլակատը ուսումնասիրելու համար:

Առաջին հայացքից կարող ես անհասկանալի թվալ, վոր ձեռնարկ ես հրատարակվում մի այնպիսի պլակատի համար, վորը նկարների միջոցով հասկացողություն պիտի տա մեծ շինարարության ուղիների մասին: Մակայն նման ձեռնարկի հրատարակման անհրաժեշտությունն ակներև կդառնա, յեթե ի նկատի ունենանք, վոր հնգամյա պլանը սոցիալիստական առաջխաղացության կուսակցական ծրագիր ես հանդիսանում և՛ բացի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերն ընդգրկելուց՝ վորոշում ես նաև մի շարք սոցիալական պրո-

բլեմներ ու շերտավորում և դասակարգային հարաբե-
րությունները. իսկ այս բոլորը չէր կարող իր լրիվ
արտահայտությունը գտնել պլակատում:

Այդ պլակատները պետք է ուսումնասիրվեն վոչ
միայն անհատների կողմից, պլակատները պետք է
ուսումնասիրվեն խմբակներում, ակումբներում, խրճիթ-
ընթերցարաններում. հնդամյա պլանը պետք է նյութ
գառնա մի շարք դասախոսությունների և զեկույց-
ների. ուստի և բացատրիչ այս ոժանդակ ձեռնարկը
անհրաժեշտ է: Գրքույկի գլխավոր նպատակն է հընդ-
ամյա պլանի ամբողջական ուսումնասիրության ըն-
թացքում մեթոդական ցուցմունքների տալը և այդ
պլանի հիմունքների նիշելը: Այս՝ մի կողմից: Մյուս կող-
մից գրքույկը լրացնում է պլակատները մի
շարք սովալներով, վոր վերաբերում են հնդամյակի
այն ճյուղերին (կուլտուրական և սոցիալական պրոբ-
լեմները, աշխատանքի հարցերը և այլն), վորոնք իրենց
արտահայտությունը չեն գտել պլակատներում:

Սեպտ. 1929

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1929 թ. մայիսին ԽՍՀՄ-ի Համամիութենական V Համագումարը քննեց և հաստատեց ժողովրդական տնտեսութեան առաջիկա հինգ տարվա պլանը: Հնգամյա պլանի տնտեսական և սոցիալ-քաղաքական բովանդակությունը նախորոշված է այն հրահանգներով, վոր դեռևս 1927 թ. վերջին տվել է կուսակցության XV-րդ համագումարը սոցիալիստական շինարարության նկատմամբ: Կուսակցության տված այս հրահանգների համապատասխան Խ. Ս. Հ. Միութեան Պետպլանը մի շարք գիտական հետազոտությունների և առանձին հանրապետությունների և ռայոնների մոտ յերեք տասնյակ հնգամյա պլանների հիման վրա մշակել է Խ. Ս. Հ. Միութեան ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական շինարարության հնգամյա՝ 1928/29 — 1932/33 թվականների՝ գլխավոր պլանը:

Պետպլանը հնգամյակի յերկու վարիանտ (նախագիծ) եր մշակել՝ 1) Յեւակետային ու ավելի նեղ վարիանտը, վոր հաշվի յե առնում ա) հնգամյակի

րնթացքում բերքի մասնակի սղության հնարավորու-
 թյունը, բ) համաշխարհային անտեսության հետ ունե-
 ցած կապի կրճատումն, ինչպես այժմ (վարկ, արտա-
 հանություն և այլն), գ) վորակային հիմունքների
 (ինքնարժեքի իջեցումը, ռացիոնալիզացիան, աշխա-
 տանքի արտադրողականությունը և այլն) համեմա-
 տարար դանդաղ աճումը, և Չ) Լավագետ (ոպոր-
 մալ) ու ավելի լայն՝ քան առաջինը՝ վարիանտը, վոր
 նկատի ունի ա) հնգամյակի րնթացքում անբերրիության
 բացակայությունը, բ) համաշխարհային անտեսու-
 թյան հետ ունեցած մեր անտեսական կապերի ավելի
 դորեզ թավը՝ շնորհիվ մեր արտահանության միջոց-
 ների ավելացման և վարկ ստանալու հնարավորու-
 թյունների, գ) ժողովրդական անտեսության շինարա-
 բության վորակային ցուցանիշների (աշխատանքի ար-
 տադրողականություն, բերքավորություն, ինքնարժեք
 և այլն) կտրուկ առաջխաղացումը:

Հնգամյակի այս յերկու վարիանտը բազմակողմանի
 քննելուց հետո Խ. Ս. Հ. Միության ժողովրդական
 կոմիտարների Խորհուրդը, կուսակցության կենտկոմը,
 Համամիութենական XVI կուսկոնֆերենցիան և Խոր-
 հուրդների V Համագումարը վորոշեցին իբրև հիմք
 ընդունել հնգամյակի լավագետ պլանը:
 Այն թվական տվյալները, վորոնք հիշվում են այս
 գրքույկում, ինչպես նաև՝ պլակատում, վերաբերում
 են լավագետ վարիանտին:

ՀՆԳԱՄՅԱԿԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՐԿԻՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՆ

Հնգամյա պլանն այն մեծ աշխատանքների ծրագիրն է, վորոնք մեր յերկրի սոցիալիստական տնտեսության ամուր հիմքն են դնում: Այդ ծրագրում հաստատապես հիշված են այն ուղիները, վորոնցով պիտի ընթանա մեր տնտեսության զարգացումը, վորպեսզի «պատմական ամենակարճ ժամանակամիջոցում հասնենք կոսպիտալիստական առաջավոր յերկրներին և ապա գերազանցենք նրանց»: Այս լենինյան կուսակցական հրահանգից յելնելով, պլանի հիմնական նպատակը կայանում է նրանում, վորպեսզի մեր հողագործական-ինդուստրիալ յերկիրը դառնա ինդուստրիալ-հողագործական յերկիր: Սա նշանակում է, վոր ինդուստրիալիզացիան պիտի իրագործվի այնպիսի չափերով և արագությամբ, վոր արդյունաբերությունը գերակշռի գյուղատնտեսության նկատմամբ և ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ դեկափար դրու-թյուն գրավի: Այդ պատճառով հնգամյա պլանը նախատեսում է նոր հսկա-գործարանների ու ելեքտրո-

կայանները ահագին մի շինարարություն, ածուխի արտադրության և քիմիական արդյունաբերության արագ ու հսկայական աճումն, արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի զարգացումն և այլն:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մեր յերկրում սոցիալիզմի հաջող կառուցումը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, յերբ մենք կվոչնչացնենք մեր տեխնիքական կախումը կապիտալիստական յերկրներից, այսինքն՝ յերբ մենք մեր յերկրում ըստ հարկի կարգավորենք վոչ միայն լայն սպառում ունեցող առարկաների արտադրությունն, այլ և այնպիսի մեքենաների արտադրությունը, վորոնք սպառման առարկաներ են արտադրում, կամ՝ ինչպես ասում են՝ արտադրության միջոցների արտադրությունը: Դրա համար ել հնգամյա պլանը նախատեսում է տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ և մեր արդյունաբերության համար (տեքստիլ, կոշիկների և այլ ֆաբրիկաների համար) զանազան այլ մեքենաներ արտադրող նոր գործարանների ահագին մի շինարարություն: Սրան համապատասխան, հնգամյա պլանը նախատեսում է ծանր ինդուստրիայի աճումը համարյա թե 3¹/₂ անգամ, իսկ սպառման միջոցների արտադրության (թեթև ինդուստրիա) աճումը՝ միայն 2¹/₂ անգամ: Այս պայմաններ-

բում միանգամայն հասկանալի յե, վոր՝ չնայած մեր տնտեսութեան զարգացման հսկայական թափին՝ առաջին հնգամյակի ընթացքում լայն սպառումն ունեցող առարկաների պահասութիւնը դեռ վերջնականապէս վերացված չպիտի լինի: Բայց կապիտալիստական կախումից ազատվելով, և սեփական մեր գործարաններն ու ֆաբրիկները ստեղծելով՝ ապագայում հարկավոր քանակութեամբ մենք ինքներս պիտի արտադրենք բնակչութեան լայն սպառման համար անհրաժեշտ բոլոր առարկաները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆ

Լայն ինդուստրիալիզացիայի հիման վրա, հնգամյակը նախատեսում է գյուղատնտեսութեան ռեկոնստրուկցիան (վերակազմումը): Բացի գյուղատնտեսական արտադրութիւնը բարձրացնելու համար ձեռք առած մի շարք միջոցներից, ինչպէս որինակ՝ գյուղատնտեսական ապրանքների գների բարձրացումը, հարկերի իջեցումը, կոնտրակտացիան և այլն, հնգամյա պլանի գլխավոր գիծը հանգում է գյուղի տեխնիքական և սոցիալական դրութեան արմատական վերափոխմանը:

Գյուղատնտեսութեան վերելքն առաջին հերթին պիտի ընթանա նրա հանրայնացման աճման ուղիով, այսինքն գյուղում սոցիալիզմի աճման ճանապարհով:

Սխալ կլիներ կարծել, թե դա մի դյուրին ճանապարհ է, վոր պիտի իրագործվի «կուլակների ու շահագործողների խաղաղ ներաճամամբ՝ սոցիալիզմում»: Ընդհակառակը, սա մի շատ դժվար ճանապարհ է, և միայն գյուղի շահագործող տարրերի հետ կատաղի կռվով պետք է անցնել այն: Սակայն սա միակ ուղին է, վորով պիտի ընթանա մեր գյուղատնտեսությունը, վորով պետքի դուրս գա այն վիճակից, այն ասիական յետաձնացությունից, վորոնց մեջ այժմ նա գտնվում է:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄԸ

Կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների վրա պետությունը մոտակա հնգամյակի ընթացքում պիտի ծախսի յեքիտ միլլիարդ ռուբլի: Հանրայնացված սեկտորի ցանքսի հրապարակը պիտի ավելանա 1927/28 թվի 2,8 միլ. հեկտարից մինչև 27 միլ. հեկտար՝ հինգամյակի վելջին: Կոլլեկտիվ տնտեսությունները պիտի ընդգրկեն մոտավորապես 20 միլլիոն գյուղացիական բնակչություն:

Գյուղատնտեսության մեջ հանրայնացման այսպիսի արագ աճումը հնարավոր է միայն գյուղատնտեսության արմատական տեխնիքական վերաշինության հիման վրա: Այդ պատճառով հնգամյակը նախատեսում է գյուղատնտեսական մեքենաների արտադրության աճումը 433 %-ով, տրակտորների արտադրության աճումը՝

4,000%-ով և քիմիական պարարտանյութերի արտադրութեան աճումը 11,000%-ով: Այս հնգամյակի ընթացքում ահագին քանակութեամբ պետք է կազմակերպվեն միջգյուղական մեքենատրակտորային կայաններ: Հանրայնացված դաշտերում հնգամյակի վերջին 170,000 տրակտոր պիտի աշխատի: Այս բոլորը յերևան է բերում բանվոր դասակարգի և գյուղացիութեան արտադրական կապի նոր ձևեր:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Հնգամյա պլանի մեջ շատ կարևոր տեղ է գրավում մեր Միութեան յետամնաց ազգային հանրապետություններն ու ինքնավար շրջանները տնտեսապես առաջ տանելու հարցը: Ճարական-կապիտալիստական Ռուսաստանի համար այս ազգային «այլացեղ» ռայոնները գաղութներ կամ դաժան շահագործման ու կոլտուրական ստրկացման առարկա էին հանդիսանում: Հոկտեմբերյան Հեղափոխությունն այդ ժողովուրդներին քաղաքական և կոլտուրական զարգացման հնարավորություն տվեց: Հնգամյա պլանն իր հիմնական խնդիրներից մեկն է համարում այդ հանրապետությունների և ռայոնների տնտեսութեան և տնտեսական կյանքի լայն զարգացումն, ուստի և նախատեսում է այդ ռայոններում գործարանների և ֆաբրիկաների կառուցումն այն բնական հարստությունների հիման վրա, վորոնք հատուկ են այդ յերկրներից յուրաքանչյուրին:

ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

*Ինդուստրիայի զարգացումը —
գյուղատնտեսության բարձրացման
հիմնական պայմանն է, գյուղացի-
ներին ազդատությանից վրկուզը
և նրանց ցրված, անհատական
տնտեսությունները միացնող, հա-
սարակական տնտեսություն դարձ-
նողը (18 - ր դ հ ս ո ս հ ո ն ֆ ե -
ր ե ն ց ի ա յ ի վ ո ը ո շ ու մ ն ե -
ր է ց):*

Այս պլանատի վրա նկարագրված են գյուղական
տնտեսության զարգացման հիմնական մոմենտները
և նրա բարձրացմանը նպաստող գլխավոր ցուցանշերը
(կապիտալ ներդրումներ, քիմիացում, գյուղատնտ. մե-
քենաների շինարարություն և այլն): Պլանատում բո-
լոր ցուցանշերը բերված են համեմատական տվյալ-
ներով. — անցած 1923/24 — 1927/28 թ.թ. հնդամյակը՝
համեմատված է նախագծված 1928/29 — 1932/33 թ.թ.
հնդամյակի հետ, ընթացիկ հնդամյակի առաջին տարվա
վերաբերյալ տվյալները՝ նրա վերջին տարվա հետ:

Պլանատը կարգալ և դիտել ձախից աջ, վերից՝ վար:
Կապիտալ ներդրումները — զրանք զրամա-
կան այն միջոցներն են, վորը պետությունը դնում
է ժողովրդական տնտեսության մեջ՝ նրա հետագա
զարգացման համար: Կապիտալ ներդրումները պլա-

կատում պատկերացված են վորպես դրամական սյուն: Վերի մասը ցույց է տալիս անցած հնգամյակի՝ 1923/24 — 1927/28 թ. թ.՝ կապիտալ ներդրումը, իսկ ներքևի մասը՝ նախագծված ընթացիկ հնգամյակի՝ 1928/29 — 1932/33 թ. թ.: Սյուների ձախ մասում նշված են ժողովրդական տնտեսության ամբողջ ներդրումները, իսկ ձախից — այն մասը, վորը գնում է գյուղական տնտեսության: Այս համեմատական տրվյալներից յերևում է, վոր

հ ն գ ա մ յ ա կ ն եր ի ն

1923/24 — 1927/28 թ. թ. 1928/29 — 1932/33 թ. թ.

ներդրված է յեղել

պետք է ներդրվի

Ամբողջ ժողտնտ. մեջ 26,5

64,6

Գյուղական տնտ. մեջ 15,

23,2

Անհրաժեշտ է ընդգծել, վոր նշված կապիտալ ներդրումները, ինչպես հիմի պարզվում է, հինգ տարվա ընթացքում զգալիորեն պետք է ավելացվեն, և տեղական բյուջեյով կատարվող ներդրումները հետ պետք է հասցվեն 90 միլիարդ ուրբլու:

Սմեն մի յերկրի զարգացման հիմնական նշաններից մեկն էլ ժողովրդական տնտեսության մեջ ներդրվող կապիտալի մեծությունն է: Վերևում մեջբերված տվյալները բացահայտ կերպով ցույց են տալիս, թե ԽՍՀՄ-ը, կոմունիստական կուսակցության ու Խորհրդային Իշխանության ղեկավարությամբ, հինգ

տարվա ընթացքում ինչպիսի հսկայական չափերով
կարգանա:

Ժողովրդական տնտեսության պրոդուկ-
ցիայի աճումը ընթացիկ հնգամյակում, ներդրը-
վող միջոցների շնորհիվ ավելի քան յերկու անգամ
կբարձրանա—հսկայական ընդարձակում կստանա: Այդ
նկարագրված է պլակատում. քառակուսածև՝ միջում
տարբեր մեծությունների շրջագծերով: Այդ ավյալնե-
րից յերևում է, վոր մթերքների դների աճումը՝ հաշ-
ված միլիարդ ուլբլիներով՝ կգնա հետևյալ կերպ. —

Հ ն դ ա մ յ ա կ ն եր ի ն

1923/24 — 1927/28 թ. թ. 1928/29 — 1932/33 թ.թ.

Արժեւ է

պետք է արժենա

Արդյունար. պրոդուկց. 18,3

43,2

Գյուղատնտ. » 16,6

25,8

Ժողովրդական յեկամուտի աճումը հան-
դիսանում է յերկրի ընդհանուր դրության բարելավման
աճման ցուցանիշը: Մեր պլակատում՝ պրոդուկցիայի
աճումից դեպի աջ՝ նկարագրված է այդ ու ցույց է
տալիս, վոր ժողովրդական ընդհանուր յեկամուտը
բարձրանում է յերկու անգամ ու մի քիչ էլ ավել, այս-
ինքն՝ 1927/28 թ, 24,4 միլիարդ ուլբլուց՝ 1932/33 թ.
հասնում է 49,7 միլիարդ ուլբլու, ըստ վորում պետք
է ընդգծել, վոր աճման թափը, սոցիալիական տարբեր
գրուպաների (խավերի) միջև՝ դասավորվում է տարբեր
կերպով: Գյուղում, որինսկ, այնպիսի զիծ է վերց-

ված, վոր բարձրացվի չքավորութեան, բատրակների և միջակների յեկամտի չափը, իջեցվի բնակչութեան կապիտալիստական տարրերի յեկամուտը: Այսպիսով, յերբ ամբողջ գյուղացիութեան յեկամուտը բարձրանում է 48 %, բատրակութեան յեկամուտն առանձին բարձրանում է 99 %-ով:

Եներգիայով զինվելը — դա եներգիայի այն աղբյուրների գործի դնելն է, վորոնց տիրում է յերկիրը (մեքենաներ, ելեքտրոֆիկացիա, քամու ուժ, բանվոր անասուն և այլն): Պլակատում նկարագրված է միայն մեխանիկական եներգիայով զինվելու ծավալումը, վորը կատարվելու յե ընթացիկ հինդ տարում՝ մեկ հասակավոր աշխատողի նկատմամբ: Այդ սովյալներից յերևում է, վոր մեկ աշխատողին՝

	1927/28 թ.	1932/33 թ.
	ընկնում էր	կլինի
Ամբողջ ժողտնտես. մեջ	402	588
Գյուղական տնտես. մեջ	324	391

կիլովատ ժամ*


Գյուղական անհատական տնտեսութեան եներգիայի բալանսը (հաշվեկշիռը եներգիայի բոլոր տեսակների — մեխանիկական և այլն) կավելանա 13 %-ով. կոլլեոզներում՝ 125 %-ով, իսկ սովխոզներում՝ 185 %-ով:

* Կիլովատ ժամը — մի միավոր է, վորով չափվում է մեխանիկական եներգիան, նա հավասար է 1,36 շոգեծիրու ուժի՝ մեկ ժամում:

Ինչ վերաբերվում է ամբողջ յերկրի եներգիս-
զինվածության, պետք է ընդգծել, Վոր 1927/28 թ.
33 միլիարդ կիլովատ ժամից, նա, 1933 թ. կրարձ-
րանա մինչև 53,8 միլիարդ կիլովատ ժամի, ըստ վո-
րում եներգիայի ամենաբարձր աճումը նախատեսված
է ելեկտրոֆիկացիայի ընդգամառում, վորը հանդի-
սանում է ամենաեթան և միակ հարմար եներգիան
հեշտությամբ հեռավոր տեղերը հաղորդելու համար:
Պրանից յելնելով՝ հնգամյա պլանում ելեկտրոֆի-
կացիան հասուկ ու մեծ տեղ է բռնում, վորի հա-
մաձայն էլ ելեկտրոֆիկացիայի գործում 3,1 միլիարդ
ուրլի կապիտալ ներդրում է կատարվում (տես
արդյունաբերության պլակատը):

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ


Գյուղական տնտեսության վերակառուցումը հան-
դիսանում է հնգամյա պլանի հիմնական նպատակ-
ներից մեկը: Վերևում արդեն ցույց է տրված այդ
խնդրի վերաբերյալ այն հիմնական գծերը, վորոնք
նշված են հնգամյա պլանում: Այժմ անցնենք գյու-
ղական տնտեսության վերակառուցման համար հընդ-
ամյակով նախատեսված միջոցների մանրամասը քըն-
նությանը: Պլակատում այդ բոլոր միջոցները նկա-
րագրված են աջ մասում՝ սկսած վերից:



Մինչև հեղափոխությունը բոլոր գյուղացիական հողերը (չհաշված պետական, վանքապատկան ու խոշոր-կալվածատիրական) բաժանված էին հետեյալ կերպ (նայեցեք պլակատին վերից — աջ)։ — չքավորները և միջակները ունեցել են ամբողջ տնտեսության 80%, բայց տիրել են հողի միայն 60%-ին։ Կուլակները ունեցել են ամբողջ տնտեսության 20% — սակայն տիրել են հողի 40%-ին։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, պետական, վանքապատկան և կալվածատիրական, ինչպես և խոշոր կուլակային հողերը տրվում են չքավորներին։ Իսկ զրա արդյունքն ստացվեց այն, Վոր ներկայումս չքավորներն ու միջակներն ունեն ամբողջ տնտեսության 96%-ը և տիրում են հողի 94,5%-ին։ Իսկ կուլակներն ունեն ամբողջ տնտեսության 4%-ը և տիրում են գյուղական հողի միայն 5,5%-ին։ Մոտակա հնգամյակում նախատեսված է կուլակային սեփականության կրճատում։ Մինչև 1933 թիվը նրանք կհասցվեն 2,5%-ի։

Հողի այդ տեսակ բաշխումից գյուղական տնտեսությունների թիվը շատ է ավելացել։ Այսպես որինակ՝ մեր յերկրում 1916/17 թ. կար գյուղական 16 միլիոն տնտեսություն, իսկ 1927/28 թ. նրանք դարձե են արդեն 27 միլիոն։ Գյուղական տնտեսության այդ



մանր ու մանրագույն միավորների բաժանվելը շատ վատ անդրադարձավ նրա գործնելության արդյունքների վրա: Նման մանր տնտեսությունները հունենալով գյուղատնտեսական ինվենտար, վոմանք ել գուրկ լինելով նույնիսկ բանող անասունից, շատ ցածր բերք են տալիս: Յրվածության պատճառով դրանց դժվար է նաև պետական ոժանդակություն ցույց տալը: Դրա հետևանքն այն յեղավ, վոր 1913 թ վի 81 միլիոն տոննա հացամթերքի փոխարեն 1927|28 թ վին ստացանք միայն 73 միլիոն տոննա: Ավելի վատ է գյուղատնտեսական ապրանքային պրոդուկցիայի (այն մասը, վոր գնում է շուկա) դրուլթյունը. — 1913 թվին նա յեղել է 20 միլիոն տոննա, իսկ 1927|28 թ. միայն 8 միլիոն: Այդ բոլորի հետեւանքով ստացվում են այն ապրանքային դժվարությունները, վոր ապրում է յերկիրը:

Գոյություն ունեցող դրությունը վերացնելու համար, կոմունիստական կուսակցությունը և Խորհրդրդային Իշխանությունը կիրառում են մի շարք միջոցներ: Այդ միջոցներից ամենագլխավորներն են՝ գյուղական տնտեսության մեքենայացումը, գիտական ու ագրարատեխնիքական ոգնությունը, քիմիական պարարտացումը, կոնստրակտացիան, վարկավորումը և այլն:

Բայց գյուղական տնտեսությունների ցաք ուցիր ներկա պայմաններում այդ միջոցների կիրա-

ուումը միանգամայն անհնարին գործ ե: Իսկապես վոր, ինչպիսի խոշոր քանակությամբ մեքենաներ պետք ե լինին, վոր 27 միլիոն տնտեսություններն առանձին-առանձին ստանան ու բավարարվեն, կամ քանի գյուղատնտեսներ են հարկավոր, վոր ցրված տնտեսությունների այդ հսկա քանակին ագրո-տեխնո-թյուն հասցվի: Ահա այս հանգամանքներն են, վոր գյուղական տնտեսությունների կոոպերացման ու կոլլեկտիվացման խընդիրը խիստ հրատապ են գարձնում: Հենց հնգամյա պլանում ել գյուղական տընտեսության կոոպերացմանն ու կոլլեկտիվացմանը գլխավոր ուշադրություն ե դարձնվում, վորովհետև միայն այդ ճանապարհով ե հնարավոր գյուղական տնտեսությունը լայն չափերով մեքենայացման յենթարկել, հասցնել այն իր բարձրությանը և գյուղացիությանը փրկել ուժասպառող, տանջալից աշխատանքից:

Մինչև 1927/28 թ. կոոպերացված ե գյուղական տնտեսությունների միայն 38 % (պլակատում նկարագրված ե այդ՝ աջ անկյունում, ամենից վեր). իսկ նախատեսվում ե ընթացիկ հնգամյակում գյուղկոոպերացիայում ընդգրկել ամբողջ գյուղական տնտեսությունների 85 %:

Բայց հատուկ ուշադրություն ե դարձվելու արտադրական կոոպերացիայի ծավալմանը: Տրակտո-

ПЯТИЛЕТНИЙ ПЛАН ПУТИ РАЗВИТИЯ


Развитие индустрии основное условие под'ёма сельско-
обособленных хозяйства в общественно-



ВЕЛИКИХ РАБОТ. НОГО ХОЗЯЙСТВА

ства, избавления крестьян от нищеты и объединения их
(из резолюции XVI партконференции)

ПЕРЕОРУЖЕНИЕ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА



МАЛЫЕ КРЕСТЬЯНСКИЕ ХОЗЯЙСТВА ОБЪЕДИНЯЮТСЯ В КОЛХОЗЫ




МАШИНО-ТРАКТОРНЫЕ СТАНЦИИ ОБСЛУЖИВАЮТ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЕ РАЙОНЫ



СОВХОЗЫ

НАЧАЛО ПОСТРОЕК

МЕХАНИЗАЦИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА



Через социалистическую
близость — к развитию
сельского хозяйства

Имя и отчество: _____
Адрес: _____
Телефон: _____



ըրգացիայի լայն չափերով զարգացման հիման վրա, գյուղական տնտեսութեան քիմիացման ու մյուս միջոցներով քաղաքի և գյուղի միջև կասեղծվի արտադրական անջակատելի կապ:

Մեր պլանատում, կարմիր գույնի քառակուսիների ձևով նկարագրված և կոլխոզների մեջ ընդգրկված գյուղական մանր տնտեսութեանների միավորվելը, դա ցույց և տալիս այն գրութեանը, վոր մենք ունեցինք 1927/28 թ. ու վորը կլինի 1932/33 թ.:

Այդ ավյալն երից յերեվում և, վոր. —

	Կոլխոզների ընդհանուր թիվը	Մի կոլխոզի հողամասի միջին մեծութունը	Ցանքի հրապարակը	Աղբանջային պրոդուկցիան միլիոն ուղ.
1927/28 թ.	34,106	55 հեկտ.	1,100,000	24
1932/33 թ.	61,250	300 հեկտ.	24,700,000	1,060

Կոլխոզները կունենան 120,000 տրակտոր, կմիացվեն 4,400,000 գյուղական տրանստեսութեաններ:

Կոլլեկտիվացման գործում խոշոր նշանակութուն կունենան մեքենա-տրակտորային կայանները և խորհրդային տնտեսութեանները: Պլանատում այդ նկարագրված և դեղին արտերի նման, վորտեղով անցնում և տրակտորային շարասյունը. իսկ կարմիր յերկու քառակուսիները նշանակում են, վոր ներկա 1929 թվին այդ կայանները ստասարկում են ընդամենը 1,500,000 հեկտար, իսկ 32/33 թվին, նման

միջգյուղական կայանները միջոցով, նախատեսվում է ընդգրկել 10.000.000 հեկտար: Ամբողջ հինգ տարում, գյուղական տնտեսությունների մշակման համար, մեքենա-տրակտորային կայանները պետք է ունենան սեփական 20.000 տրակտոր: Առաջիկա 1929/30 տարում նման մեքենա-տրակտորային 100 կայան պիտի կազմակերպվի:

Յուր հրդային տնտեսությունները հանդիսանում են սոցիալիստական գյուղական տնտեսության այն իսկական ոջախները, վորոնց նմանությամբ պետք է վերակառուցվի գյուղական ամբողջ հողագործությունը: Միայն սոցիալիստական պետության ղեկավարությամբ, ժամանակակից գիտության ու տեխնիկայի վերջին խոսքի հիման վրա մեր յետամնաց գյուղական տնտեսությունը վերակառուցելով՝ հնարավոր կլինի միլիոնավոր մասսաները փրկել աղքատությունից ու քայքայումից: Հնգամյա պլանում սովխոգային շինարարության վրա խոշոր ուշադրություն է դարձված: Վորոշված է այդ ընագավառում մոտ 400 միլիոն ուրբի կապիտալ գործ դնել: Նոր սովխոզների կազմակերպման ու շինարարության զուգընթաց՝ ընդարձակվելու յեն հները: Հնգամյակի վերջում խորհրդային տնտեսությունները պետությանը 36 միլիոն ցենտներից ավելի հացամթերք կտան: Դա հավասար է ներկայումս մի տարում քաղաքի սպառած հացամթերքի կեսին ու կազմում

ե յերկրի ընդհանուր սպրանքային հացի մեկ վեցերորդ մասը: Մեր պլակատում սովխոզ շինարարությունը և գյուղատնտեսության մեքենայացումը նկարագրված են շրջագծերի և սյուների ձևով: Չափից ցույց ե տրված սովխոզ շինարարությունը և նրանց ցանքսի հրապարակը: Այդ տվյալներից յերևում ե, վոր սովխոզներն ըստ քանակի այնքան չեն աճում, վորքան աճում ե նրանց պրոդուկցիան և ընդարձակվում ցանքսի հրապարակը: Սովխոզների արտադրած պրոդուկցիայի արժեքը 1927/28 թ. հավասար եր 170 միլիոն ռուբլու, իսկ 1932/33 թ. կլինի 690 միլիոն ռուբլի:

Սովխոզների ցանքսի հրապարակը 1929թ. 1,2 միլիոն հեկտարից 1933 թվին բարձրանում ե մինչև 5 միլիոն հեկտարի: Նրանց ցանքերը պետք ե կատարվին 25,000 արակտորներով ու գյուղատնտեսական այլ մեքենաներով և գործիքներով:

Բայց սովխոզները խոշոր նշանակություն պիտի ունենան վոչ միայն նրա համար, վոր պետութայնը տալու յեն սահմանված քանակով հացամթերք, այլև նրա համար, վոր նրանք ահագին ազդեցություն են ունենալու շրջակա գյուղական տնտեսությունների վրա: Սովխոզները լինելու յեն վոչ միայն լավագույն, որինակելի տնտ.ներ, այլ և սեփական մեքենաներով պետք ե ոգնեն շրջակա գյուղացիներին՝ մշակելու իրենց հողերը: Ուկրայինայում Շեվչենկոյի անվան սովխոզը միայն 29 թվին, իր մեքենաներով, կազմա-

կերպել ե 26 գյուղերի 24 հազար հեկտար հողերի մշակումը: Բացի դրանից, սովխոզները գյուղացիներին մատակարարելու յեն մաքուր տեսակի սերմեր, ընտիր, ազնվացեղ անասուններ և այլն:

Գյուղատնտեսության մեքենայացումը տարեց-տարի ծավալվում ե: Դրա համար ել մեզ մոտ տարեց-տարի ընդարձակվում ե մեքենաշինարարությունը: Բայց մեքենաշինարարության խիստ աճում ե ծրագրված ընթացիկ հնգամյակում: Այսպես, յեթե հնգամյակի սկզբում մեր գործարանների բաց թողած գյուղատնտեսական մեքենաների ընդհանուր արժեքը հավասար եր 153 միլիոն ռուբլու (տես պլակատը, սովխոզներից աջ), ապա հնգամյակի վերջում արտադրվելու յեն գյուղական տնտեսության համար 610 միլիոն ռուբ. արժողությամբ մեքենաներ: Բոլոր մեքենաների արժեքը, վորն ստանում ե գյուղը քաղաքից (այդ թվում և արտասահմանից գնվածները) 1929 թ. մեկ միլիարդ ռուբլուց 1932/33 թ. կբարձրանա յերեք միլիարդի, այսինքն՝ յերեք անգամ կավելանա:

1927/28 թվին ունեցած 30.000 տրակտորների թիվը 1932/33 թվին կբարձրանա մինչև 188.000-ի: Մինչև հեղափոխությունը վոչ միայն գյուղական, այլև կալվածատիրական հողերում վոչ մի տրակտոր չի յեղել:

Գյուղատնտեսական պրոդուկցիայի վերամշակումը՝ շնորհիվ ամբողջ տնտեսության մեքենայացման աճ-

ման՝ զգալիորեն բարձրանում է՝ 1,2 միլիարդ
ռուբլուց մինչև 3,5 միլիարդ ռուբլի:

Կոնսորակտացիան իրենից ներկայացնում է
մի պայմանագիր, վոր կնքվում է պետության կամ
կոոպերացիայի և գյուղի կամ առանձին մի խումբ
գյուղացիների միջև: Ըստ այդ պայմանագրի՝ գյուղա-
ցին խոստանում է ցանել վորոշ տարածությամբ հող,
կամ արտադրել վորոշ քանակությամբ գյուղատնտե-
սական մթերքներ ու գոյություն ունեցող գներով
հանձնել պետությանը: Մնաստ գյուղացին կամ կոլլեկ-
տիվը սալով նման պարտավորություն, պետությունից
վորպես կանխավճար է ստանում փող, մաքուր տեսակի
սերմ, մեքենաներ և այլն: Հնգամյա պլանով նախատես-
ված է կոնսորակտացիայի տնօրին գարգացում, ըստ
վորի, բացի առանձին գյուղացիներից՝ պայմանագիր է
կնքվելու ամբողջ գյուղերի և նույնիսկ շրջանների հետ:
Նման կոնսորակտացիաները պետք է ամբապնդեն վոչ
միայն քաղաքի (պատվեր տվողի) և գյուղի (պատվերը
կատարողի) կապը, այլ բարձրացնելու յեն չքավոր ու
միջակ տնտեսությունների արտադրողականությունը:
Պլակատում յերևում է (սովխոզներից ցածր), վոր
1932/33 թ. կոլխոզների գծով կոնսորակտացման
է յեն թարկվելու 17.576.000 հեկտար ցանքս,
վորը պետությանը տալու յէ 342 միլիոն
ռուբլու հաց: Յերկարատե կոնսորակտացիան կընդ-
գրկի 20 միլիոն հեկտար ցանքս:

Քիմիացման յենթարկել գյուղատնտես-
սությունը նշանակում է՝ հողը պարարտացնելու
և վնասատուները վոչնչացնելու համար գործադրել
զանազան հանքային (քիմիական) նյութեր: Մեր
գյուղացիությունը հին դարերից սկսած իր հողը
պարարտացնում է աղբով. իսկ դա չի բավականաց-
նում և առհասարակ աղբն այնպիսի լավ արդյունք-
ները չի տալիս, վոր տալիս է քիմիական պարարտա-
ցումը: Դրա համար, վերջին տարիները մեր յերկրում
սկսել ենք քիմիական պարարտանյութեր պատրաստել,
նախապատերազմյան շրջանի հետ համեմատած բարձ-
րացնելով նրանց արտադրությունը 10 անգամ: Բայց
մեր խորհրդային դաշտերի համար, պարարտանյու-
թերի մի այնպիսի քանակ՝ 175.000 տոննա, վորն ար-
տադրել ենք մենք 1927/28 թվին, շատ անբավարար
է: Դրա համար, հնգամյա պլանում նախագծված է
ավելացնել քիմիական պարարտանյութերի մշակումը
1932/33 թվին՝ հասցնելով դա 8 միլիոն տոննայի, այս-
ինքն 50 անգամից ավելի բարձրացնել: Այդ պայման-
ներում, 1933 թվին մեկ հեկտար ցանքսադաշտի վրա
կգործադրվի 60 կիլոգրամ (մեկ կիլոգրամը հավասար
է 2,5 գրվանքայի) քիմիական պարարտանյութ: Սա-
կայն այդ քանակն էլ է անբավարար, վորովհետև
մեկ հեկտար հողի վրա պարարտանյութ է գործա-
դրվում Գերմանիայում 300 կիլոգրամ, իսկ Հոլան-
դիայում՝ 600 կիլոգրամ: Դրա համար էլ այդ յեր-

կրներում շատ լավ բերք է ստացվում: Քիմիական պարարտանյութերի արտադրությունը խոշոր նշանակություն ունի նաև վնասատուների դեմ պայքարելու համար, վորոնք տարեկան լավում են 30 միլիոն տոննա հաց, և այդ՝ այն ժամանակ, յերբ ամբողջ գյուղական բնակչությունն ուտում է մոտ 29 միլիոն տոննա հաց: Համենայն դեպս, շնորհիվ թված բոլոր միջոցների, մեզ կհաջողվի հնգամյակում մեր դաշտերի բերքատվությունը բարձրացնել 35 %-ով ու ցանքսի հրասլարակն ընդարձակել 22 %-ով:

Սոցիալիզմի հազթանակը մեր յերկրում հանդիսանում է այն նպատակը, վորն իրագործելու համար և կազմված է հնգամյակը: Իհարկե, սոցիալիզմի կառուցումը դեռ յերկար ժամանակ է պահանջում, սակայն անտեսական շինարարությունն ընթացիկ հնգամյա պլանը մեր յերկրի սոցիալիստական տարրերի աճմանը ահազին զարկ կտա, կուժեղացնի: Սոցիալիստական տարրերի աճման արագացումն առանձնապես ուժեղ կլինի գյուղատնտեսության մեջ: Մեր պլակատում այդ նկարագրված է ներքևում, ամենից վերջը՝ կարմիր շրջագծի ձևով, սպիտակ սեպերով, ուր գրված է. «սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը գյուղատնտեսության մեջ»: Այստեղ ցույց է տրված, վոր ներկայումս, ամբողջ գյուղատնտեսության մեջ սոցիալիստական մասը՝ այսինքն սովխոզները և կոլխոզները՝ կազմում են միայն 2 %: Իսկ

հնգամյակի վերջին՝ 1932/33 թվին նա կբարձրանա 15 %-ի: Յերկրի տնտեսական կյանքի բնույթը սոցիալիստականի վերափոխվելը կարելի չե դատել և նրանով, թե ինչպես ե փոխվում հիմնական ֆոնդերի ստրուկտուրան: Ահա թե ինչպես են նրանք փոփոխվում, —

Ս ե կ ա ո Ր Ն Ե Ր Ը	1927/28 թ.	1932/33 թ.
Պետական սոցիալիստական	51,0	63,5
Կոոպերատիվ	1,7	5,3
Մասնավոր (այդ թվում և գյուղաց).	47,3	31,1

Այս բոլոր ավյալներից ու վերևում հիշածներից վորոշակի կերպով յերևում ե, թե Կոմունիստական Կուսակցութունը և Խորհրդային Իշխանությունն ինչպիսի վճռականությամբ ու կուռ կերպով իրականացնում են Լենինի ավանդները՝ մեր յերկիրը սոցիալիստական յերկիր դարձնելու համար: Անհրաժեշտ ե մեկ ել ընդգծել, վոր հնգամյակը, հակառակ աջ թերահավատների վայնասունի՝ վոչ միայն ամբողջովին պետք ե իրագործվի, այլև շատ բնագավառներում գերազանցվելու յե: Այդ կարելի յե նկատել թեկուզ կոլխոզների ցանքսի հրապարակի աճումից, վորն աջերի մեջ մեծ կասկածանքներ առաջացրեց ու սրեց կուլակային տարրերի դիմադրությունները: Այսպես, որինակ՝ կոլխոզների ցանքսի հրապարակը հնգամյակում յենթադրվում եր հասցնել մոտ 22 միլիոն հեկտարի, մինչդեռ միայն 1928/29 թվին՝ մի տարում 4.000.000 հեկ-

տարից բարձրացել է 10 միլիոնի Դա նշա-
կում է, վոր միայն մի տարում արդեն իրականաց-
վել է հնգամյակի համարյա թե կեսը: Հասկանալի
յե, վոր դյուղատնտեսության կոլեկտիվացման այդ
հաջողությունները հեշտությամբ ու առանց հիվան-
դությունների չեն կատարվի: Այստեղ պետք է հաղ-
թահարել ահագին դժվարություններ ու կարողանալ
անխնա պայքարել քաղաքի և գյուղի կապիտալիստա-
կան տարրերի դեմ: Ահա թե ինչու Համամիութենա-
կան 16-րդ կուսկոնֆերենցիան հնգամյա ծրագրի
մասին ընդունած բանաձևում հայտարարում է վողջ
կուսակցությանը, ամբողջ բանվոր դասակարգին. —

«Միայն անխնա հարվածելով բոլոր տատանում-
ները, բոյլշեիկյան գլխավոր գծի կիրառման ընթացքում,
վորի իրադործումը նշանակում է ամբապնդել բանվոր
դասակարգի կապը դյուղացիության հետ, միայն բան-
վոր դասակարգի ղեկավարող զերի հետագա ուժեղաց-
մամբ, կարող է ապահովվել հնգամյա պլանի դրած
սոցիալիստական շինարարության խնդիրների լուծումը:

Կոնֆերենցիան կուռ հավատ է հայտնում այն
մասին, վոր կուսակցությունը շախշախիչ հարված
կտա վոչ միայն աջ թեքմանը, այլև լենինյան գծից
շեղվող ամեն մի թեքման նկատմամբ ցույց տրվող
հաշտվողական տրամադրություններին:

Բանվորական մասսաների գլուխն անցած, ամբողջ
տնտեսության սոցիալիստական վերակառուցման խըն-

դիրները իրագործման ուղիով կուսակցությունը գնում է առաջ ու մտքի լիզացիայի յե յենթարկում աշխատավորական լայն զանգվածները՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ դժվարությունները հաղթահարելու և տնտեսական շինարարության հնգամյա պլանն իրագործելու համար»:

Վերջում՝ մեջ բերենք գյուղատնտեսության անման հիմնական ցուցանիշերը. —

	1913 թ.	1927/28 .թ	1932/33 թ.
Ցանքսադաշտերը՝ միլիոն հեկտարներով	117	116	142
Հացահատիկը՝ միլիոն տոննաներով	82	74	106
Սոճոր յեղջ. անասուն՝ միլիոններով	60	66	81
Մանր յեղջ. անասուն՝ միլիոններով	121	132	160
Մանվածք հազար տոննաներով	454	250	620
Կաթնամթերք՝ հազար տոննաներով	27	31	48

ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆՈՒՄ

(Հիմնական ցուցանիշներ)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կալվածատիրական - կապիտալիստական հասարակարգից մենք ամեն տեսակետից ժառանգել ենք կոլտուրական ծայրահեղ յետամնացություն: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մենք ահագին ջանք ենք թափել ու հասել զգալի հաջողություններին: Այսպես, որինակ, 1914 թ. բոլոր զպրոցական հիմնարկություններում, ի թիվս վորոց և բարձրագույն զպրոցներում, ուսանում էյին 8 միլ. մարդ, իսկ այժմ, 1928/29 թ. ուսանում են ավելի քան 15 միլ. մարդ, ըստ վորում այն ժամանակ ուսանում էյին բուրժուաների փավակասունները, իսկ այժմ բանվորների ու գյուղացիների զավակները: Բացի դրանից մեր բանֆակներում, ֆարգավուչներում, յերեկոյան դասընթացներում և այլն, կրթություն ե ստանում միլիոնավոր բանվորագյուղացիական յերիտասարդություն: Խրճիթ-ընթերցարանները, ակումբները, կինոն ու ռադիոն, վոր հեղափոխությունից առաջ բոլորովին գոյություն չունեյին, այժմ որեկան տասնյակ հազարավոր բանվորներ ու գյուղացիներ են սպասարկում:

Բայց այս բոլորը դեռ բավական չէ: Յեթե պրո-
լետարական պետութիւնն այս բոլոր տարիների ըն-
թացքում՝ ժողովրդական տնտեսութեան վերականգ-
մամբ զբաղված լինելու շնորհիվ՝ հնարավորութիւն
չի ունեցել կուլտուրական հարցերին անհրաժեշտ
ուշադրութիւն հատկացնել, այժմ այդ ասպարիզում
ծրագրվում է, բառիս լրիվ իմաստով՝ կուլտուրա-
կան հեղափոխութիւն:

Անդրադիտութիւնն անկուլտուրականութեան և
տգիտութեան զլիսավոր ազբյուրն է: Այդ պատճառով
հնգամյակում անդրադիտութեան վերացմանը մեծ
ուշադրութիւն է հատկացվում: Գրագիտութեան աճումը
հետևյալ կերպով պիտի ընթանա. 1932/33 թ. ընակ-
չութեան յուրաքանչյուր 1.000 մարդուց 820-ը գրա-
գետ պիտի լինի, մինչդեռ 1926 թ. յուրաքանչյուր
1.000-ից միայն 396-ն էր գրագետ, իսկ ցարական
Ռուսաստանում՝ 1.000 մարդուց միայն 232-ը:

Ընդհանուր պարտադիր ուսումը պիտի
կատարվի այն հաշվով, վոր հնգամյակի վերջում ընդ-
հանուր պարտադիր ուսումն անպայման ընդգրկի
17 միլ. յերեխա, 8 — 11 տարեկան հասակի: Այս քա-
նակութեան կեսից ավելին՝ մոտավորապես 60%-ը՝
գյուղին պիտի ընկնի: Այս գործի համար, բացի առկա
265 հազար ուսուցչից, պահանջվում է ևս 22 հազար
ուսուցիչ: Ընդհանուր պարտադիր ուսումն իրակա-
նացնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցների վրա

(դպրոցների կառուցումն ու նորոգումն, ուսուցիչներ պատրաստելը, դպրոցական ձեռնարկները և այլն) առնվազն պիտի ծախսվի $3\frac{1}{2}$ միլիարդ ուսույթ:

Կ ու լ ա ու ը ղ ա կ ա ն - լ ու ս ա վ ո ը ղ ա կ ա ն հ ի մ ն ա ը - կ ու թ յ ու ն ն եր ն այս հնգամյակում պիտի աճեն հետևյալ կերպով՝

	1927/28 թ.	1932/33 թ.
Խրճիթ-ընթերցարաններ	21.876	38.283
Ակումբներ	6.117	7.646
Գրադարաններ	23.000	34.500
Կինո-սարքավորումներ	8.520	34.700
(Սրանցից 25.000-ը՝ դյուղերում)		
Ռադիո-ընդունիչներ	326.000	6.000.000

Վ ո ը ղ ա կ յ ա լ ու թ ի* պ ա տ ը ա ս ա ու մ ը՝

	1927/28 թ.	1932/33 թ.
Ինժեներներ	30.000	75.000
Տեխնիկներ	38.000	110.000
Վերակալ բանվորներ (Փարբ-գործարանային աշակ. դպրոցներից, աշխատանքի կենտրոնական ինստիտուտից և այլն)	112.000	435.000
Գյուղատնտեսներ (բարձրագույն և միջին վերակի)	5.520	22.870
Զանազան մասնագետներ (կոլտնտեսուկոլտններում և խորհրդատնտեսուկոլտններում)	3.300	23.000

* Այս թվերը վերաբերում են ԽՍՀ Միության ամբողջ ժողովրդական տնտեսուկոլտնը:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսութեան համար մասնագետ բանվորներին, ապա նրանց կարիքը վորոշված է 200.000 տրակտորավարներին և 50.000 մեխանիկներին քանակով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահութեան դրութեան մասին կարելի չէ դատել բնակչութեան մահացութեան աստիճանը նկատի առնելով: Ցարական Ռուսաստանում ամեն տարի յուրաքանչյուր 1.000 մարդուն մահացութեան 33 դեպքեր ընկնում: Այժմ ԽՍՀ Միութեան մեջ այդ քանակն իջել է մինչև 21, բայց և այնպես կուլտուրական յերկրների հետ համեմատած՝ մահացութեանը դեռևս շատ բարձր է: Այսպես, Նորվեգիայում յուրաքանչյուր 1.000 բնակչին մահացութեան 11 դեպք է ընկնում, Գերմանիայում և Անգլիայում՝ 12, իսկ Ռումինիայում ավելի, քան մեզանում — 22 դեպք:

Ժողովրդական առողջապահութեան գործը բարելավելու համար ըստ հնգամյա պլանի ահազին ձեռնարկութեաններ են նախատեսվում: Այսպես, որինակ, սանիտարական բժիշկների թիվը 2.080-ից պիտի հասնի, 3.430 ի, գյուղերում վեներական բուժական հիւանարկութեաններին ցանցը 380-ից պիտի ավելանա մինչև 800, քաղաքներում՝ 320-ից մինչև 500: Մանկական կոնսուլտացիաների ցանցը

1.470-ից պիտի հասնի 2.700-ի: Միայն Ռուս. Խորհրդ. Ծեղ. Սոց. Հանր. մեջ մանկական մսուրների տեղերի թիվը պիտի հասնի 65 հազարի:

Առողջապահութեան ասպարիզում հնգամյակի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում բժշկական ոգնութեան բարելավումը: Այս հարցին հենց մեծ ուշադրութիւն է հատկացված: Հիվանդանոցային մահճակալների ընդհանուր թիվը համարյա թե պիտի կրկնապատկվի և 194.000-ից մինչև 365.000-ի հասնի ու՝ վոր գլխավորն է՝ մահճակալներն ավելի լավ պիտի բաշխված լինեն գյուղի և քաղաքի միջև: Ներկայումս ամեն մի 10.000 բնակչին քաղաքում 49 մահճակալ է հասնում, իսկ գյուղում՝ մոտ 5: Ըստ հնգամյակի՝ գյուղերում յուրաքանչյուր 10.000 մարդու նկատմամբ մահճակալների թիվը պիտի հասնի 11-ի: Զգալի չափով պիտի ավելանա բժիշկների թիվը՝ 100 հազար բնակչին՝ 37-ի փոխարեն՝ պիտի հասնի 42 բժիշկ, այսինքն 14%-ով ավել:

Ս. Ս. Հ. Միութեան սոցիալ-կուլտուրական շինարարութեան բոլոր ծախսերը հնգամյակի ընթացքում 16 միլիարդ ռուբլուց ավելի յեն, վորոնցից մոտ 5 միլիարդ ռուբլի պիտի ծախսվի առողջապահութեան վրա:

Հնգամյա պլանով ծրագրված կուլտուրական շինարարութեան վրա ծախսվելիք գումարների քանակի մասին կարելի յե դատել մի շնչին ընկնող

ծախքի աճման համեմատ: Ահա թե ինչ փոփոխություններ պիտի կատարվեն հնգամյակի ընթացքում՝

ծախսվում եր՝ պիտի ծախսվի՝

	1927/28	1932/33	Աճումը % %-ով
Ամբողջ սոցիալ.-կուլ-տուրական շինարարության վրա	11.48 ուրբ.	24.53 ուրբ.	214%
Կուսավորության վրա	6.84 »	15.28 »	223%
Առողջապահության վրա	4.04 »	7.48 »	185%
Սոցիալական ապահովության վրա	— .60 »	1.77 »	290%

Այս բոլոր միջոցներն ամբողջ Խ. Ս. Հ. Միության աշխատավոր մասսաների վերելքի ամրակուռ հիմքն են դնում: Սակայն սա դեռ բավական չե լայն մասսաների վերադաստիարակման հիմնական խնդիրը հասկանալու համար: Անհրաժեշտ է հաստատապես յուրացնել Լենինի այն պատգամները, վոր տվել է նա կուսակցության XI համագումարում իր յեզրափակիչ ճառում: Նա ասել է՝ «...Հարցի եյությունն այժմ նրա մեջ է կայանում, վորպեսզի ավանգարդը (առաջապահ շարք) չվախենա ինքն իր վրա աշխատելու, ինքն իրեն վերադիներու և իր թերի պատրաստականությունն ու անբավարար հմտությունը խոստովանելու խնդրից»:

Մասսաների կուլտուրական մտկարգակի բարձրացման համար պետութեան կողմից ձեռք առած միջոցների հետ միասին, պետք է յեռանդուն կերպով ուսանողար աշխատել թե՛ խորհրդային, թե՛ պրոֆեսիոնալ և թե՛ կուսակցական մեր սպարասների աշխատանքի վորակի բարելավման շուրջը: Անհրաժեշտ է, վորպեսզի ամեն մի աշխատավոր՝ այդ աշխատանքում ակտիվ կերպով մասնակցելով՝ աշխատի ինքն իրեն կատարելագործելու վրա և վերացնի անցյալի վատթար ժառանգութունը: Նման պայմաններում կարելի չէ վատահ լինել, վոր կուլտուրական հեղափոխութեան խնդիրները հաջողութեամբ կվճռվեն:

ՅԵԶՐԱՓԱԿՈՒԹՅՈՒՆ

Հնգամյա պլանը՝ կոնկրետ ձևերով դնելով մեր յերկրի վերաշինութեան հսկայական խնդիրները՝ ցույց է տալիս, թե վորքան հեռու յենք մենք առաջ ընթացել «նեպային Ռուսաստանը սոցիալիստական Ռուսաստանի» վերածման ուղիով: Այս պլանի իրագործման համար ահազին ջանք և ամբողջ բանվոր դասակարգի ու գյուղացիութեան ակտիվութեան զորահավաք է պահանջվում: Իսկ դրա համար հարկավոր է, վոր աշխատավոր լայն մասսաները քաջ տեղյակ լինեն՝ թեկուզ հիմնական հարցերում՝ հնգամյա պլանի թե՛ բովանդակութեանը և թե՛ նրա սոցիալտնտեսական նշանակութեանը:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, վոր հնգամյա պլանն ուսումնասիրելիս՝ մանավանդ խմբակային զբաղմունքների ընթացքում (խմբակներում, ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում, դասախոսությունների և ղեկույցների ժամանակ և այլն) չպետք է սահմանափակվել լոկ ընդհանուր պլանով: Այս աշխատանքն անհրաժեշտ է շարկապել տեղական հնգամյակի ուսումնասիրության հետ: Սա նշանակում է, վոր որինակ, կովկասում ԽՍՀ Միության հնգամյա պլանը պարզաբանող աշխատանքի ընթացքում պետք է՝ համամիութենական պլանի ընդհանուր փաստերի և ցուցանիշների հետ զուգընթաց՝ տվյալներ տալ և «իր» հանրապետության, նահանգի, նույնիսկ գավառի հնգամյա պլանից, այդ տվյալները կապելով ընդհանուր պլանի հետ. կամ թե՛ ընդհանուր պլանին ծանոթանալուց հետո ուսումնասիրել տեղական պլանը: Տեղական հնգամյակի տվյալները կարելի չէ ստանալ տեղական պլանային հանձնաժողովում, Խորհրդում և այլն:

Պրոպագանդ մղելով մասսաների մեջ մեծ աշխատանքների պլանի և նրա ապագա նվաճումների մասին, մենք կոգնենք աշխատավոր միլիոնավոր մասսաներին գիտակցել և ակտիվ կերպով լծվել մեծ սոցիալիստական շինարարության գործին:

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՄԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ —

- 1) Պլակատ. — «ԽՍՀՄ արդյունաբերության զարգացման ուղիները».
- 2) Պլակատ. — «ԽՍՀՄ Գյուղ.-տնտ. զարգացման ուղիները».
- 3) Խրոհական ձեռնարկ՝ «ԽՍՀՄ արդյունաբերության զարգացման ուղիները» պլակատը ուսումնասիրելու համար. 44 էջ.
- 4) Խրոհական ձեռնարկ՝ «ԽՍՀՄ գյուղ.-տնտ. զարգացման ուղիները» պլակատը ուսումնասիրելու համար. 40 էջ.
- 5) «Մեր տնտեսությունը հիմք սարուց հետո», 40 էջ, 5 կոպ.


Պ Ա Հ Ա Ն Ջ Ե Ց Ե Ք

ՄԵՐ ԿՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ՁՐԻ.

ԴԻՄՆԸ՝ Москва, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038328

[084]


0 400.

A $\frac{I}{4082}$



МАЙБЕРГ
ПЯТИЛЕТН. ПЛАН
ВЕЛИКИХ РАБОТ
год. пособие к плану
„Пути развития
сел.-хоз. СССР.“

На армянском языке



Центральное Издательство Народов СССР. Москва, Никольская, 10